AraratBank

№ 5305/08
«12» 11 2024

(+374)10 59 23 23 | info@araratbank.am | araratbank.am
Buzand St., bldg. 87, prem. 85, 0002 Yerevan, Armenia

# ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ

1. Սույն երաշխիքը, ինչպես նաև սույն երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում են ՀՀ ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից «ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ԴԻԶԵԼ» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) մասնակցելուց բխող՝ նույն ծածկագրով հրավերով սահմանված պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 3,055,500 (երեք միլիոն հիսունհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000466 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է բենեֆիցիարի կողմից «ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ԴԻԶԵԼ» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով պրինցիպալի կողմից հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից մինչև 2025թ.-ի հունիսի 02-ը ներառյալ: Սույն երաշխիքի տրամադրման փաստի վերաբերյալ տեղեկատվությունը՝ երաշխիքի համարը, տրամադրող բանկի անվանումը և սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագիրը՝ առանց գումարի չափի մասին նշման, երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է սույն կետում նշված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ gnumner@mia.gov.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում է հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝
1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.
2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր տնօրեն՝ Մ.Անանյան

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ · ARARATBANK OJSC · АРАРАТБАНК ОАО · 02500518